

ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՂ

**ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ
ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ –
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

*Հանձնման ամսաթիվ – 06/08/2013
Վերանայման ամսաթիվ – 16/07/2014*


Ենթաձրագիր VI

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

L2860-ICB-1-06

**Գավառ, Մարտունի քաղաքներ և Նորատուս,
Գանձակ, Սարուխան, Կարմիրգյուղ, Լճաշեն,
Զկալովկա, Նորաշեն, Շատվան, Դոմաշեն գյուղեր**

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ



ԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԻ ԿՈՂՄԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎՈՂ

**ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ
ՍԵԿՏՈՐԻ ԾՐԱԳԻՐ –
ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ**

**Ենթաձրագիր VI ԳԵՂԱՐՔՈՆՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ
ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ**

**L2860-ICB-1-06 Գավառ, Մարտունի քաղաքներ և Նորատուս,
Գանձակ, Սարուխան, Կարմիրգյուղ, Լճաշեն,
Չկալովկա, Նորաշեն, Շատվան, Դոմաշեն գյուղեր**

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ

ՀԳՇՆ ՍՊԸ տնօրեն՝

Վ. Հովասափյան

Բնապահպան՝

Ք. Սահակյան



Երևան,
Հունիս, 2014թ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ 4

2. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ 5

3. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԿԼԻՄԱՆ..... 6

4. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ 7

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ 9

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Բնապահպանական արագ գնահատման (ԲԱԳ)ստուգաթերթ 10

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ՄԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ 14

1. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ

Ենթաձրագրի այս ենթաբաղադրիչի նպատակն է բարելավել ծրագրի շրջանակներում ընդգրկված ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի քաղաքների և Նորատուս, Գանձակ, Սարուխան, Կարմիրգյուղ, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, Շատվան, Դդմաշեն գյուղական բնակավայրերի խմելու ջրի մատակարարման համակարգերը:

Առաջնահերթությունը տրվել է բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի բարելավմանը: Գավառ, Մարտունի քաղաքների և վերը նշված գյուղական բնակավայրերի ջրամատակարարման համակարգերի բարելավման նպատակով իրականացվող աշխատանքները ներառում են՝

- Արտաքին ջրատարի վերակառուցում կամ կառուցում՝ de250-de225 պոլիէթիլենե խողովակներով՝ L=9860մ երկարությամբ:
- Բաշխիչ ցանցում de40-de280 տրամագծերի պոլիէթիլենե ջրազծերի կառուցում՝ L=190664մ ընդհանուր երկարությամբ:
- Ընդհանուր թվով 59890 բաժանորդների ջրաչափական հանգույցների և անհատական տների մուտքազծերի կառուցում՝ de20-de32 պոլիէթիլենե խողովակներով:
- Ընդհանուր թվով 7900 հատ ջրաչափական հորերի կառուցում:
- Ընդհանուր թվով 69 հատ ջրամատակարարման հորերի կառուցում:
- Ընդհանուր թվով 71 հատ թաղված փականային հանգույցների կառուցում:

Գավառ, Մարտունի քաղաքների և Նորատուս, Գանձակ, Սարուխան, Կարմիրգյուղ, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, Շատվան, Դդմաշեն գյուղերի բնակչության թիվը 01.01.2013թ. դրությամբ կազմում է 77227 մարդ, որից քաղաքային բնակչությունը՝ 41723 մարդ: Բաժանորդների ընդհանուր թիվը կազմում է 15762, որից գյուղական բնակավայրերի բաժանորդներն են 5794-ը:

Տարեկան բնակչության աճի ցուցանիշը՝ համաձայն «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԾՈՒ 2012»-ի հրատարակված տվյալների կազմում է 0.43%:

Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ծրագրում ընդգրկված համայնքների բնակիչներին ապահովել խմելու որակի ջրով և կայուն ջրամատակարարմամբ:

Ենթաձրագրով նախատեսված աշխատանքները ներառում են արդեն գոյություն ունեցող կառուցվածքների վերականգնման աշխատանքներ, հետևաբար դրանց ազդեցությունը բնական լանդշաֆտների վրա կլինի նվազագույն՝ կրելով ժամանակավոր բնույթ:

Շինարարական աշխատանքների իրականացման ժամանակ, ըստ անհրաժեշտության, ասֆալտ ձեռք կրերվի մասնագիտացված ասֆալտի գործարանից, որը պատասխանատու է շրջակա միջավայրի վրա ազդեցության մեղմացման միջոցառումների իրականացման համար: Բոլոր ասֆալտի գործարանները գործում են ՀՀ բնապահպանական օրենսդրության համապատասխան:

2. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ծրագրում ընգրկված Գավառ, Մարտունի քաղաքները և Նորատուս, Գանձակ, Սարուխան, Կարմիրգյուղ, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, գյուղերը սպասարկվում են ՀԶԳ ՓԲԸ կողմից, իսկ Դդմաշեն և Շատվան գյուղերը սպասարկվում են համայնքների կողմից:

Վերը նշված բնակավայրերից՝ Գավառի և Սարուխանի ջրամատակարարման համակարգը սնվում է համայնքների տարածքում գտնվող ,Հացառատիե և ,Սարուխանիե ջրառատ աղբյուրներից՝ 3 խումբ ՕԿՁ- ներով՝ պոմպակայանների միջոցով: Ջուրը ախտահանվում է աղբյուրակապերի տարածքում գործող քլորակայաններում:

Մարտունի քաղաքի ջրամատակարարման համակարգը սնվում է ,Ծակքարիե և ,Հոպոյի վարե աղբյուրակապերից՝ ինքնահոս եղանակով:

Նորատուս, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն համայնքների ջրամատակարարումն իրականացվում է ,Հացառատիե աղբյուրներից սնվող Հացառատ-Սևան Փ500(St) ճնշումային համակարգի 32,5կմ երկարությամբ ջրատարից, որին միանում են համապատասխան կետերում Փ50(St) խողովակներով:

Գանձակ գյուղի ջրամատակարարումն իրականացվում է 2x500մ³ ՕԿՁ-ներից և խորքային հորերից՝ ինքնահոս եղանակով:

Կարմիր Գյուղի ջրամատակարարումն իրականացվում է ,Սարուխանիե-ի աղբյուրներից՝ պոմպակայանի միջոցով և ,Բլոյի գյուղից ինքնահոս եղանակով:

Դդմաշեն գյուղը սնվում է աղբյուրների վրա կառուցված կապտաժային կառուցվածքից, որտեղից ջուրը 2x250մ³ տարողությամբ ՕԿՁ-ների միջոցով տրվում բաշխիչ ցանց:

Շատվան համայնքի ջրամատակարարման սնման աղբյուր է հանդիսանում 2038մ նիշում գտնվող ,Շատջրեքե աղբյուրների կապտաժային կառուցվածքը

Ուսումնասիրված բնակավայրերում ջրամատակարարման ներքին համակարգերը գտնվում են վթարային վիճակում, բաշխիչ ցանցերը և գոյություն ունեցող ՕԿՁ-ներն ունեն փոխարինման կամ վերանորոգման կարիք:

Վերջին տարիներին իրականացվել են ջրազծերի, պոմպակայանների, ՕԿՁ-ների և ջրամատակարարման հորերի վերակառուցման աշխատանքներ: 2013թ. Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվել է ջրամատակարարման համակարգի բարելավման նախագիծ, որում նախատեսված է բաշխիչ ցանցի վերակառուցման աշխատանքներ:

Ենթաձրագրում ընդգրկված բնակավայրերը Գավառ քաղաքը կոյուղացված է մասնակիորեն, իսկ Մարտունի քաղաքը կոյուղացված է ամբողջովին, կոյուղին հեռացվում և լցվում է մաքրման կայան:

Գյուղերը նույնպես կոյուղացված են մասնակիորեն: Կոյուղին հավաքվելով բնակավայրից, հեռացվում և լցվում է Գավառազետ: Գյուղական բնակավայրերի ցածրադիր թաղամասերում չկան ջրահեռացման համակարգեր, բնակիչներն օգտվում են բակային զուգարաններից:

3. ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ ԵՎ ԿԼԻՄԱՆ

Ենթաձրագրի շրջանակներում ընդգրկված Գավառ, Մարտունի քաղաքներ և Նորատուս, Գանձակ, Մարուխան, Կարմիրգյուղ, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն, Շատվան, Դրմաշեն գյուղական համայնքները գտնվում են Գեղարքունիքի մարզում: Գեղարքունիքի մարզի տարածքը զբաղեցնում է 5348 կմ² մակերես: Մարզկենտրոնը Գավառ քաղաքն է, որը Երևան քաղաքից գտնվում է 98կմ հեռավորության վրա:

Գեղարքունիքի մարզի դիտարկվող տարածքն իրենից ներկայացնում է բարձր ծալքաբեկորավոր և միջին բարձրության լեռներով շրջապատված գոգավորություն, որի միջլեռնային իջվածքի հատակը զբաղեցնում է Սևանա լիճը: Բնակավայրերը տեղաբաշխված են ծովի մակերևույթից 1700-2100մ նիշերի սահմաններում՝ Սևանա լճի հարավային և արևմտյան ափերի գետահովիտներում:

Տարածաշրջանի կլիման ցամաքային է, բնութագրվում է ցուրտ ձմեռով, հարաբերական տաք և արևոտ ամառով, խոնավ և փոփոխական զարնանային ու աշնանային եղանակներով: Սևանի ավազանի ջրային մակերեսը կլիմայի ձևավորման վրա թողնում է մեղմ ազդեցություն և նպաստում արևափայլի առաջացմանը: Արևափայլի միջին տևողությունը կազմում է 2650 ժամ, իսկ առանց արևային օրերի թիվը կազմում է 19:

Միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 5.3°C: Բացարձակ առավելագույն ջերմաստիճանը կազմում է +32°C է, իսկ բացարձակ նվազագույնը՝ -33°C: Նվազագույն ջերմաստիճանն իջնում է մինչև -40° C (Գավառ քաղաք):

Մթնոլորտային տեղումների տարեկան քանակությունը կազմում է 400-800մմ: Ձմռանն ամենուրեք գոյանում է կայուն ձնածածկույթ: Լճի ափի ձյան ծածկոցը պահպանվում է 120-130օր, իսկ բարձր լեռնային գոտում՝ մինչև 250օր:

Տարածաշրջանում գերակշռում են արևմտյան, հարավ-արևմտյան և հարավային քամիները: Քամու միջին արագությունը տատանվում է 3 - 5 մ/վրկ սահմաններում:

Գեոմորֆոլոգիական տեսակետից տարածաշրջանին արևմուտքից սահմանակից է Գեղամա լեռնաշղթան, հարավից՝ Վարդենիսի հրաբխային լեռնավահանները, հյուսիսից՝ Արեգունու լեռնաշղթաները: Ռելիեֆը իրենից ներկայացնում է ուժեղ կտրտված լեռնային լանդշաֆտ, ժայռոտ լանջերով, տարբեր խորության և լայնության ձորերակներով

Երկարաբանական տեսակետից տարածքը ներկայացված է միջին-վերին չորրորդական լճային նստվածքներով և էոցենի հասակի անդեզիտային պորֆիրիտներով և տուֆոբեկչիաներով: Լճային նստվածքները ներկայացված են ավազների, կավերի, գլաքարերի և մանրագլաքարերի հերթափոխվող շերտերով: Բնակավայրերի կառուցապատված տարածքներում ապարները հիմնականում ներկայացված են դեյուվիալ նստվածքներով և պորֆիրիտների խոշոր բեկորներով:

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը բնութագրվում է ուժեղ և թույլ ջրատար ապարների առկայությամբ: Ուժեղ ջրատար են լճային նստվածքները, իսկ անդեզիտային պորֆիրիտները և տուֆաբեկչիաները համարվում են թույլ ջրատարներ: Սևանա լճի ջրհավաք ավազանը հարուստ է խորքային ջրերով՝ աղբյուրներով և արտեզյան

ավազաններով, որոնք տեղաբաշխված են անհավասարաչափ: Գետահովիտներում տարածված են ճնշումային արտեզյան ջրեր, որի հետևանքով այդ տարածքներում գրունտային ջրերի մակարդակները ավելի բարձր են:

Բնակավայրերի մեծ մասը տեղադրված են գետահովիտներում, որտեղ գեոդինամիկ պրոցեսներից տարածված են տարբեր մասշտաբի և ծագման սահքեր, հեղեղներ և քարահոսքեր (Գավառագետ, Ձկնագետ և այլն):

Տարածաշրջանն ունի գրունտների առավելագույն՝ 0.3-0.4g արագացում և գտնվում է 9 բալ երկրաշարժերի հնարավոր ուժգնության շրջանում:

4. ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐ

Տարածաշրջանում, լճա-այրուվիալ և լճային նստվածքների վրա ձևավորվել են գետահովտային, մարգագետնացած կոպճային և թույլ զարգացած ավազակոպճային հողագրունտների տիպերը: Ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են՝ մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրներ:

Անտառային լանդշաֆտային էկոհամակարգերը տեղաբաշխված են զառիթափ լեռան լանջերին՝ ծովի մակերևույթից 1950-2400մ բարձրության սահմաններում: Դրանք հիմնականում արևելյան կաղնու (*Quercus macranthera*) և գլիու ոչ մեծ անտառամասեր են՝ արտահայտված առանձին կղզյակներով և փոքրիկ խմբավորումներով: Այդ խմբավորումներն աստիճանաբար փոխարինվում են լեռնա-քսերոֆիլ թփուտների: Ավելի հարավ ընկած տարածություններում տարածված են գլիու և կաղնու անտառների հիմնական խմբավորումները:

Ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ: Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովող թփուտները՝ ցածրաճ գլիուտներ (*Juniperus depressa*) և այլն:

Սևանա լճի ջրից ազատված հողագրունտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ): Թփուտներից տարածված են՝ արոսենու (արոսենի Կուզնեցովի (*Sqrbus kuznetsqvii*), արոսենի Հայաստանի (*S.hajastana*), արոսենի հունական (*S.graeca*)), մասրենու (*Rqsa spinqsissima*, *R.canina*), ասպիրակի (*Spiraea crenata*), ալոճենու (*Crataegus qrientalis*), ուռենու (*Salix caprea*) և այլ համակեցություններ: Նորատուս և Մարտունի համայնքների մերձափնյա տարածքներում առկա են ոչ մեծ ճահիճներ, որտեղ

աճում են՝ բոշխ կարճամազ (*Carex hirta*), դուն թուխ (*C.fuscus*) և այլ տեսակներ: Առափնյա ճահճացող մասերում և ջրափոսերում լողում են ջրոսպի կլորավուն, կամ երկարավուն թիթեղանման և գորտնուկի կանաչ տերևներով և դեղին ծաղիկներով բուսակները:

Ազգային պարկի և պահպանական գոտու տարածքի շուրջ 60 բուսատեսակներ օգտագործվում են որպես դեղաբույսեր, իսկ շուրջ 100 բուսատեսակներ համարվում են ուտելի:

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում կենդանական աշխարհը ներկայացված է բազմազան տեսակներով: Անողնաշարավորների կարգաբանական խմբում հաշվառված են՝ փափկամարմիններից (*Mollusca*) խխունջների տեսակներ, խեցգետնակերպերից՝ Երկարաչանչ խեցգետինը (*Pqntastacus leptodactilus*) և հողվածոտանիների տեսակներ /միջատների/: Միջատներից՝ Կապտաթիթեռը (*Maculinea nausithqus* Bergs) գրանցված է Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցանկում:

Տարածաշրջանում ողնաշարավոր կենդանիներից դիտարկվել են՝ ձկների 9, Երկկենցաղների 3, սողունների 17, թռչունների 267, կաթնասունների 34 տեսակներ: Երկկենցաղներից հանդիպում են Ցատկողների (*Salientia*) կարգի հետևյալ տեսակները՝ լճագորտ (*Ranaridibunda*), փոքրասիական գորտ (*Rana macracnemis*), կանաչ դողոշ (*Bufo viridis*), Շելկովնիկովի ծառագորտ (*H.a.shelkqvnikovi*):

«Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հանդիպող թռչնատեսակներից են՝ կոնչան բադը, կարմրագլուխ սուզաբադը, քարակաքավը, լորը, սովորական տատրակը, թխակապույտ աղավնին, անտառային աղավնին և այլն:

Վերը նշված կենդանիների կարգաբանական խմբերից շատ տեսակներ ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում, այդ թվում, կաթնասուններից՝ ջրասամույրը, գորշ արջը, անտառային կատուն, բեզարյան այծը, սողուններից՝ խայտապղետ մողեսիկը (*E.a.transcaucasia*) և փոքրասիական մողեսը (*Lacerta parva*), իսկ թռչուններից՝ ձկնկույր, սովորական ֆլամինգոն, Հայկական որորը (*Laurus armenicus*), որը համարվում է էնդեմիկ տեսակ: Սևանա լճի երկու էնդեմիկ ձկնատեսակներ՝ Սևանի իշխանը և Սևանի բեղուն նույնպես ընդգրկված են Հայաստանի Կարմիր գրքում:

Ենթաձրագրում ընդգրկված համանքներն ունեն տարածքներ «Սևան» ազգային պարկի պահպանման գոտում և հիմնականում հանդիսանում են ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ներառելով նաև լճի լողափնյա գոտին: Ենթաձրագրում ընդգրկված բնակավայրերից «Սևան» ազգային պարկին ամենամոտը Չկալովկա գյուղն է, որը գտնվում է «Սևան» ազգային պարկի սահմաններից 200մ հեռավորության վրա:

Տարածաշրջանում առկա են նաև ռեկրեացիոն և զբոսաշրջության ռեսուրսներ, արգելոցային գոտիներ /ազգային պարկեր/, բնության հատուկ պահպանվող տարածքներ: Բնակավայրերին մոտ գտնվող «Սևան» ազգային պարկի արգելոցային գոտու մեջ մտնում են «Նորատուսի» և «Նորաշենի» արգելոցները, որոնց սահմանները համանուն համայնքներից գտնվում են 600-800մ հեռավորության վրա:

Արգելավայրային գոտում, Մարտունի քաղաքից 1.0կմ հեռավորության վրա գտնվում է «Գավառագետի» արգելավայրը, որի նպատակն է ապահովել՝ Գավառագետի գետաբերանային հատվածում մնացորդային լճակների պահպանությունը և «Նորատուս» թերակղզու ավամերձ հատվածի թռչունների բնադրավայրերի պահպանությունը, ինչպես նաև հազվագույտ ձկնատեսակների ձվադրումն ու զարգացումը:

Ենթաձրագրում ընդգրկված բնակավայրերում առկա են մշակութային, հնագիտական կամ ժառանգված տեղանքներ, այդ թվում Լճաշեն համայնքում գտնվող Լճաշենի դամբարանադաշտը, որը գտնվում է բնակավայրից դուրս: Իսկ գոյություն ունեցող 10-13-րդ դարերի վանքերը ենթաձրագրում ընդգրկված բնակավայրերից գտնվում են 2-5կմ հեռավորությունների վրա և ծրագիրը չի առնչվում վերջիններիս հետ:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Շրջակա միջավայրի նախնական գննությունը (ՇՄՆԶ) բացահայտել է, որ նախատեսվող ջրամատակարարման համակարգի բարելավման աշխատանքների իրականացման տարածքներում /ծրագրի ազդեցության գոտում/ լանջաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Ենթաձրագիրն իրականացվելու է հիմնականում բնակավայրերի կառուցապատված տարածքներում, իսկ աշխատանքների իրականացման համար այլ տարածքներ չեն ընդգրկվի: Ծրագրի իրականացման արդյունքում, տարածաշրջանում գոյություն ունեցող հատուկ պահպանվող տարածքները ևս չեն ենթարկվի որևէ ազդեցության:

Ըստ շրջակա միջավայրի նախնական գննության ենթաձրագիրը դասակարգվել է որպես Բ կարգի ծրագիր: Աշխատանքային նախագծի հետ տվյալ ենթաձրագիր համար պետք է մշակվի շրջակա միջավայրի կառավարման պլան /ՇՄԿՊ/, որը պետք է ներառի աշխատանքային նախագծում ներառված բոլոր համայնքները:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. Բնապահպանական արագ գնահատման (ԲԱԳ) ստուգաթերթ

Երկիրը/ծրագրի անվանումը ՀՀ բնակավայրերի ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերի բարելավում

Ստորաբաժանում **Ենթածրագիր 6.** Գեղարքունիքի մարզի Գավառ, Մարտունի քաղաքներ և Նորատուս, Գանձակ, Մարուխան, Կարմիրգյուղ, Լճաշեն, Չկալովա, Նորաշեն, Շատվան, Դրմաշեն գյուղեր

| Ուսումնասիրության հարցեր | Այո | Ոչ | Ոչ | Նշումներ |
|--|-----|----|----|--|
| Ա. Ծրագրի վայրը | | | | |
| Այդո՞ք ծրագրի իրականացման տարածքը՝ | | | | |
| ▪ խիտ է բնակեցված | | | X | Ծրագրում ընդգրկված Գավառ և Մարտունի քաղաքները բնակեցված են միջին խտության, իսկ գյուղական համայնքները բնակեցված են նոսր |
| ▪ ծանրաբեռնված է զարգացման/ շինարարական գործունեությամբ | X | | | Բնակավայրերի 80%-ն ունի զարգացման ծրագրային քաղաքաշինական փաստաթղթեր /գլխավոր հատակագծեր/ |
| ▪ կից է շրջակա միջավայրի տեսանկյունից որևէ զգայուն տարածքի, կամ գտնվում է դրա սահմաններում | | | X | Համայնքների տարածքներից՝ որոշ հատվածներ /Նորաշեն, Չկալովկա, Լճաշեն/ գտնվում են «Սևան» ազգային պարկի պահպանության գոտում, սակայն ծրագրի իրականացման տարածքները /բնակավայրերը/ գտնվում են Սևան՝ ազգային պարկի սահմաններից դուրս: |
| ▪ մշակութային ժառանգության տեղամաս է | X | | | Համարյա բոլոր բնակավայրերում առկա են պատմամշակութային հուշարձաններ, սակայն ծրագիրը չի առնչվում վերջիններիս հետ |
| ▪ պահպանվող տարածք է | | | X | Լճաշենի դամբարանադաշտը, որը բնակավայրից գտնվում է 700մ հեռավորության վրա |
| ▪ ճահճուտ է | X | | | Սևանա լիճը, որը հանդիսանում է ազգային նշանակության քաղցրահամ ջրավազան: Ծրագրում ընդգրկված բնակավայրերը /բացառությամբ Շատվան համայնքի/ գտնվում են Սևանա լճի կենտրոնական և անմիջական ազդեցության գոտում: «Ճայերի կղզի»արգելոցը /գտնվում է Նորաշեն համայնքում/ և «Գավառագետի» արգելավայրը /գտնվում է Մարտունի համայնքում / հանդիսանում են ջրային, խոնավ տարածքներ |
| ▪ մանգրային ծառուտ է | | X | | Հայաստանում նման տարածքներ չկան: |
| ▪ գետաբերան է | | X | | |
| ▪ պահպանվող տարածքի բուֆերային գոտի է | X | | | Բնակավայրերի մեծամասնությունը /բացառությամբ Դրմաշեն, Շատվան գյուղեր/ գտնվում են «Սևան» ազգային պարկի պահպանման, ռեկրեացիոն, կամ զբոսաշրջության գոտում |
| ▪ կենսաբազմազանության պահպանման հատուկ տարածք է | | | X | «Նորաշենի» արգելոցը Նորաշեն գյուղից գտնվում է 800մ հեռավորության վրա, իսկ Գավառագետի արգելավայրը Մարտունի քաղաքից գտնվում է 1.0կմ հեռավորության վրա: Վերջիններիս նպատակը թռչունների բնադրավայրերի պահպանությունն է: |
| ▪ ծովախորշ է | | X | | |

| Ուսումնասիրության հարցեր | Այո | Ոչ | Ոչ | Նշումներ |
|---|-----|----|----|--|
| Բ. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություններ Արդյո՞ք ծրագիրը կհանգեցնի՝ | | | | |
| ▪ վերին հոսանքում գտնվող համայնքներից, արդյունաբերական ձեռնարկություններից, գյուղատնտեսությունից կեղտաջրի հեռացման և հողի էռոզիայի հոսքի պատճառով աղտոտված ջրի մատակարարման | | | X | բնակավայրերի ջրամատակարարումն իրականացվում է ստորերկրյա աղբյուրներից |
| ▪ պատմամշակութային հուշարձանների/տարածքների վիճակի վատացման և այդ տեղանքների կորստի/վնասման | | | X | Համարյա բոլոր բնակավայրերում առկա են պատմամշակութային հուշարձաններ, սակայն ծրագիրը չի առնչվում վերջիններսիս հետ |
| ▪ գրունտային ջրի չափազանց մեծ քանակով մղման պատճառով հողի նստման վտանգի | | X | | Նախագծում չի նախատեսվում գրունտային ջրերի ջրառ, այդ իսկ պատճառով ծրագրի իրականացումը չի կարող հանգեցնել հողի նստեցման |
| ▪ համայնքների տեղահանման պատճառով առաջացող սոցիալական բախումների | | | X | չի կանխատեսվում |
| ▪ մակերևութային և գրունտային ջրերի այլ շահառու ջրօգտագործումների հետ ջրամատակարարման համար չմաքրված ջրի ջրառի հակամարտությունների | | | X | Ենթածրագրի շրջանակներում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է ստորերկրյա աղբյուրներից: Խմելու ջուրը չպետք է օգտագործվի ոռոգման կամ այլ նպատակներով: |
| ▪ չմաքրված ջրի անբավարար մատակարարման (օրինակ, չափազանց շատ պաթոգեններով կամ հանքային բաղադրիչներով) | | | X | Այս ենթածրագրի շրջանակներում խմելու ջրի մատակարարումն իրականացվում է ստորերկրյա աղբյուրներից, ախտահանումից հետո: |
| ▪ բաշխիչ ցանց վտանգավոր ջրի առաքման | | | X | |
| ▪ ջրառի աշխատանքների կամ ջրհորների ոչ պատշաճ պաշտպանության, հանգեցնելով ջրամատակարարման աղտոտման | | | X | ծրագրում ընդգրկված ջրընդունիչները և հորերը կահավորված են ցանկապատերով և սանիտարական գոտիներով |
| ▪ գրունտային ջրի չափազանց մեծ ջրառի, հանգեցնելով աղայնացման և հողի նստեցման | | | X | Նախագծում չի նախատեսվում գրունտային ջրերի ջրառ, այդ իսկ պատճառով ծրագրի իրականացումը չի կարող հանգեցնել աղակալման և գրունտի նստեցման |
| ▪ պաշարապահ ջրամբարում ջրիմուռների չափազանց շատ աճի | | | X | |
| ▪ համայնքի ենթակառուցվածքի հզորությունների սահմանը գերազանցող ծավալով կեղտաջրերի արտադրության աճի | | | X | համայնքներում /բացառությամբ Մարտունի քաղաքի/ բացակայում են կեղտաջրերի մաքրման կայանները |
| ▪ ջրի մաքրման կայաններից տիղմի ոչ պատշաճ ձևով հեռացման | | X | | Այս ենթածրագրի համար կիրառելի չի: |
| ▪ աղմուկը և այլ հնարավոր վնասները մեղմելու և ենթակառուցվածքները պաշտպանելու համար պոմպակայանների և մաքրման կայանների շուրջ ոչ պատշաճ բուֆերային գոտու առկայության | | | X | ծրագրի շրջանակներում նախագծված պոմպակայանը սահմանազատված կլինի սանիտարական գոտին պահպանող ցանկապատով |
| ▪ հաղորդագծերի և մոտեցնող ճանապարհների հետ կապված վատթարացումների | | | X | մոտեցնող ճանապարհների վատթարացում չի նախատեսվում, իսկ էլեկտրահաղորդման գծերի հետ հատման դեպքում հատումը կիրականացվի պահանջվող նորմաներին համապատասխան |
| ▪ քլորի և այլ վնասակար քիմիական նյութերի ընդունման, պահեստավորման և բեռնաթափման ոչ պատշաճ նախագծված կառուցվածքներից ծագող առողջապահական վտանգների | X | | | քլորի և այլ վտանգավոր քիմիական նյութերի ստացման, պահպանման համար նախատեսված միավորների նախագծային փաստաթղթերը կազմվում են գործող նորմատիվների պահանջներին համապատասխան |
| ▪ ախտահանման համար օգտագործվող քլորից աշխատողների առողջության և անվտանգության վտանգների, շինարարության և շահագործման ժամանակ կենսաբանական և ֆիզիկական այլ վտանգների | X | | | քլորի, կամ այլ աղտոտող նյութերի հետ աշխատելիս անհրաժեշտ է պահպանել աշխատանքի անվտանգության անհրաժեշտ կանոնները |

| Ուսումնասիրության հարցեր | Այո | Ոչ | Ոչ | Նշումներ |
|--|-----|----|----|---|
| ▪ մարդկանց տեղափոխման կամ պարտադրված վերաբնակեցման | | | X | Չի կանխատեսվում |
| ▪ աղբատների, կանանց և երեխաների, բնիկների կամ այլ խոցելի խմբերի վրա անհամաչափ ազդեցության | | | X | Չի կանխատեսվում |
| ▪ շինարարական աշխատանքների պատճառով աղմուկի ու փոշու | X | | | մեղմացնող միջոցառումները կներառվեն բնապահպանական կառավարման պլանում/ԲԿՊ/ |
| ▪ շինարարական աշխատանքների պատճառով ճանապարհային երթևեկության ավելացման | X | | | ոչ էական աճ, կանխատեսվում է շինարարության ժամանակահատվածի համար |
| ▪ շինարարական գործունեությունից հողի շարունակական էռոզիայի/ նստվածքների տեղափոխման | X | | | շինարարության կազմակերպման կոնկրետ միջոցառումները կտրվեն ԲԿՊ-ում |
| ▪ վատ ՇեՊ մաքրման գործընթացների (հատկապես ֆիլտրերում տիղմի կուտակման) և բաշխիչ համակարգերում մնացորդային քլորի ոչ պատշաճ մոնիտորինգի հետևանքով անհամապատասխան քլորացման պատճառով վտանգավոր ջրի մատակարարման | | | X | Ֆիլտրերում տիղմի կուտակման խնդիրը կիրառելի չէ, իսկ բաշխման համակարգում մնացորդային քլորի մոնիտորինգն իրականացվում է սահմանված կարգով: |
| ▪ չեզոքացնող քիմիական նյութերի մատակարարմանը ոչ համարժեք ուշադրություն դարձնելու հետևանքով կոռոզիայի ենթարկված բաշխման համակարգով ջրի առաքման | | X | | Այս համակարգի շահագործման ժամանակ ջուրը մաքրող քիմիական նյութեր չեն գործածվում |
| ▪ քլորի գազի պատահական արտահոսքի | | | X | չի կանխատեսվում |
| ▪ չափից ավելի մեծ ջրառի հետևանքով հոսանքն ի վար ջրօգտագործողների վրա բացասական ազդեցության | | | X | համակարգի վերակառուցման նախագիծը մշակվում է բացառելու համար նման իրավիճակները |
| ▪ ջրի մրցակցային օգտագործումների | | | X | Ծրագրի նպատակն է մեղմել ջրօգտագործման մրցակցությունը |
| ▪ ջրամատակարարման աճի պատճառով կեղտաջրի հոսքի աճի | X | | | |
| ▪ կենցաղային ջրերի ծավալի ավելացման (խոհանոցային և լվացքի ջուր) և կոյուղու մաքրման կայաններում տիղմի ծավալի աճի | | | X | ծրագրում ընդգրկված բնակավայրերում կոյուղու մաքրման կայաններ չկան, գոյություն ունեցողներն էլ չեն գործում |
| ▪ ծրագրի շինարարության և շահագործման ժամանակ բնակչության մեծ ներհոսքի, ինչը կարող է սոցիալական ենթակառուցվածքի ու ծառայությունների վրա (ինչպես օրինակ ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգերը) բեռնվածքի աճ առաջացնել | | | X | Ծրագրի ծավալները փոքր են և այն վերաբերում է գոյություն ունեցող համակարգերի վերակառուցմանը, սոցիալական նոր ազդեցություն չի կանխատեսվում |
| ▪ սոցիալական կոնֆլիկտների, եթե վարձում են այլ շրջաններից կամ երկրներից աշխատողների | | | X | Հիմնականում ներգրավվելու է տեղական աշխատուժը |
| ▪ շահագործման և շինարարության ժամանակ պայթուցիկ նյութերի, վառելիքի և այլ քիմիական նյութերի տեղափոխման, պահեստավորման, օգտագործման և/կամ հեռացման պատճառով համայնքի առողջության և անվտանգության համար ռիսկերի | X | | | ծրագրի շրջանակներում օգտագործվող պայթուցիկ նյութերի, վառելիքի և այլ քիմիական նյութերի օգտագործման անվտանգության կանոնները պահպանելու դեպքում ռիսկերը կհասցվեն նվազագույնի |

| Ուսումնասիրության հարցեր | Այո | Ոչ | Ոչ | Նշումներ |
|---|-----|----|----|--|
| <ul style="list-style-type: none"> համայնքի առողջության և անվտանգության համար ռիսկերի՝ պատահական վթարների և բնական վտանգների պատճառով, հատկապես երբ ծրագրի կառուցվածքային տարրերը կամ բաղադրիչները հասանելի են ազդակիր համայնքի անդամների համար կամ երբ դրանց վթարը ծրագրի տարրերի շինարարության, շահագործման և ապամոնիտաժման ժամանակ կարող է բերել համայնքի վնասման | X | | | ծրագրի շրջանակներում օգտագործվող պայթուցիկ նյութերի, վառելիքի և այլ քիմիական նյութերի տեղափոխման, պահեստավորման, օգտագործման անվտանգության կանոնները պահպանելու դեպքում պատահական վթարների և բնական աղետների հետևանքով համայնքներին սպասվող ռիսկերը կհասցվեն նվազագույնի |

| Հարցեր կլիմայական փոփոխությունների և աղետների ռիսկի վերաբերյալ | Այո | Ոչ | Նշումներ |
|--|-----|----|--|
| <p>Հետևյալ հարցերը նախատեսված չեն բնապահպանական դասակարգման համար: Նրանք այս հարցաթերթում ընդգրկվել են, որպեսզի օժանդակեն կլիմայական աղետների հնարավոր վտանգները սահմանելուն</p> | | | |
| <ul style="list-style-type: none"> Արդյո՞ք նախագծային տարածքը ենթակա է այնպիսի վտանգների, ինչպես օրինակ երկաշարժերը, հեղեղումները, սողանքները, տրոպիկական ցիկլոնային քամիները, փոթորկոտ ակեկոծությունները, ցունամիի կամ հրաբխային ժայթքումները և կլիմայական փոփոխությունները (տե՛ս հավելված 1) | X | | Հայաստանը գտնվում է ակտիվ տեկտոնական գոտում և կարող է ենթարկվել վտանգների՝ բոլոր հնարավոր հետևանքներով |
| <ul style="list-style-type: none"> Կարող են ջերմաստիճանի, տեղումների, կամ ծայրահեղ իրադարձությունների փոփոխությունները ծրագրի տևողության ընթացքում ազդել տեխնիկական կամ ֆինանսական կայունության վրա (օրինակ՝ անձրևների քանակի փոփոխությունների պատճառով կայուն ջրամատակարարման կրճատում, ծովի մակարդակի բարձրացման պատճառով առաջարկվող ջրամատակարարման աղբյուրում աղակալում | X | | տեղումների քանակի կրճատումը կարող է հանգեցնել աղբյուրներում ջրի քանակի նվազմանը, ինչն իր հերթին կհանգեցնի կայուն ջրամատակարարման խաթարմանը |
| <ul style="list-style-type: none"> Արդյո՞ք ծրագիրն ունի դեմոգրաֆիկ կամ հասարակա-տնտեսական կողմեր, որոնք արդեն խոցելի են (օրինակ՝ բնակչության, գյուղական-քաղաքային ներգաղթողների, անօրինական բնակիչների, ազգային փոքրամասնությունների, կանանց կամ երեխաների հաճախակի անտեսվածության) | | X | |
| <ul style="list-style-type: none"> Արդյո՞ք ծրագիրը կարող է մեծացնել շրջակա տարածքի կլիմայական, կամ աղետների նկատմամբ խոցելիությունը (օրինակ՝ ջրի օգտագործում խոցելի աղբյուրից, որից օգտվում են մեծ թվով սպառողներ, կամ նպաստել երկրաշարժի գոտիներում բնակչության հաստատմանը) | | X | |

* Աղետը համարվում են հավանական վնասակար ֆիզիկական իրադարձություն

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԵՆԹԱԾՐԱԳՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՔԱՐՏԵԶ

